

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գլոթեն ասում էր, որ բանաստեղծին ճանաչելու համար պետք է ճանաչել նրա հայրենիքը: Մենք վստահորեն կարող ենք ավելացնել, որ բանաստեղծին ճանաչելու համար պետք է ճանաչել նաև նրա ժամանակը: Սա ճշմարիտ է բոլոր իսկական բանաստեղծների համար բոլոր ժամանակներում. բայց հատկապես՝ մեր ժամանակ, հատկապես 20-րդ դարում:

20-րդ դարը տիրականորեն խուժեց ոչ միայն պետությունների, հասարակությունների, այլև անհատների կյանքի մեջ, իր անջնջելի դրոշմը դրեց մարդկային ճակատագրերի վրա: Մի՞թե հեղափոխությունների կամ երկու համաշխարհային պատերազմների ժամանակ հնարավոր էր պատկերացնել մարդկանց, որոնք շարունակում էին ապրել իրենց խաղաղ մենության, իրենց առտնին հոգսեփի մեջ, հովվերգական կյանքով: Ժամանակը համառորեն պահանջում էր անհատներից որոշակի դիրք գրավել, կանգնել քաղաքական այս կամ այն ուժի կողմը, ընտրություն կատարել: Այս իրողությունը տարբեր կերպ կարելի է գնահատել. դրա մեջ ողբերգական մի կանխորոշվածություն կա անհատի համար, որը մեծ հաշվով զրկվում է իր ճակատագիրը գոնե հարաբերականորեն ազատ տնօրինելու իրավունքից: Բայց օրինաչափություն է, և պետք է հաշվի առնենք:

Հայ գրականությունը, ինչպես գրականությունն առհասարակ, երբեք քաղաքականությունից կտրված չի եղել: Բայց այդքան ուղղակի մասնակցություն քաղաքականությանը հատուկ է միայն 20-րդ դարի դրականությանը: Գրականությունը կուսակցականանում է, դարձյալ ժամանակի պահանջով: Հիշեցեք 20-րդ դարի հայոց գրականության մեծերին. շատ քիչ բացառություններով, նրանք բոլորը կապված էին այս կամ այն կուսակցության հետ՝ Իսահակյանը, Շանթը, Աղբալյանը, Տերյանը, Չարենցը, Բակունցը, Ահարոնյանը, Թեքեյանը, Չոպանյանը, Համաստեղը և մյուսները...

Չարենցի հայտնի պահանջը՝ «ժամանակիդ շունչը դարձիր», կարող էր ծնվել միայն այն տարիներին: Մի անգամ ևս կրկնենք, որ բոլոր իսկական



արվեստագետները իրենց ժամանակի արտահայտությունն են. բայց Չարենցի ասածը ուրիշ էր, Չարենցը պահանջում էր ավելի ուղղակի, անմիջական արձագանք ժամանակի ինդիքներին, արագորեն իրար հաջորդող, ամեն ինչ հեղափոխող իրադարձություններին: Իր ստեղծագործությունը հենց այդպիսին էր:

Այս օրինաչափությունը շատ կողմերով կանխորոշեց նաև Չարենցին հաջորդող դրական սերնդի կյանքը, այն սերնդի, որի գրական հասունությունը համընկավ պատերազմի կամ հետպատերազմյան տարիներին և որի մեջ էր Միլվա Կապուտիկյանը: Այդ սերնդի համար հեղափոխությունը դեռ շարունակվում էր, հիմա արդեն ոչ իբրև խելագարված ամբոխների գրոհ, այլ իբրև սոցիալիստական շինարարություն, որը կոչված էր անճանաչելիորեն փոխելու աշխարհի դեմքը: Եվ այդ սերունդը պարտավոր էր որդեգրել գիտակցված-բաղաբաշխական դիրքորոշում: «Պարտավոր էր» բառը ևս գործածում եմ իր ամենաճշգրիտ նշանակությամբ: Չարենցի համար պատմությանն ակտիվորեն և անմիջականորեն արձագանքելը ազատ ընտրություն էր: 30-ական թթ. գրականություն մտնող սերնդի համար այլևս այդ ազատ ընտրությունը չկար: Արդեն ոչ թե կամ ոչ այնքան իրադարձությունների ներքին տրամաբանությունը, որքան հասարակությունը, պետությունը, նրա գաղափարաստությունը գրողից պահանջում էին ցուցաբերել ակտիվ դիրքորոշում, այն էլ մի սրտակի ուղղությամբ՝ պաշտպանելով սոցիալիզմը և ամեն կերպ պայքարելով նրա հաղթանակի համար:

Բայց պետք է լավ հասկանալ նաև, որ այս պահանջը սոսկ կոպիտ սլարտադրանք չէր, ինչպես երբեմն այդ ներկայացվում է, մանավանդ առաջին տասնամյակներում: Նոր հասարակության իդեալները զորեղ ազդեցություն ունեին զանգվածների գիտակցության վրա, մարդիկ հավատում էին, որ աշխատում են ամենաարդար, իդեալական հասարակություն ստեղծելու համար, և այս հավատը շատ կարևոր էր հատկապես երիտասարդ մարդկանց համար, որոնք աշխարհ էին մտել այդ նույն նոր հասարակության հետ միասին, ուրիշ հասարակություն չէին տեսել և ռեալ ընտրություն էլ չունեին:

Միլվա Կապուտիկյանը ծնվել ու հասակ է առել այս մթնոլորտում: Բայց այստեղ առաջ է գալիս բանաստեղծի անհատականության խնդիրը: Ժամանակը անհատներ չի ստեղծում: Ժամանակը ձևավորում է անհատներին այն նյութից, որն ինքը արդեն ստացել էր: Իդեալական դեպքը այն է, երբ տաղանդավոր անհատը ի սկզբանե համապատասխանում է ժամանակի պահանջներին: Կա նաև ազգային մթնոլորտի, ազգային արժեքների խնդիրը: Հայ գրականությունը ի սկզբանե, բայց հատկապես 19-րդ դարից, ամենասերտ կապերով կապված էր ազգային, հասարակական կյանքի հետ, ժողովրդի հոգևոր կյանքի, հոգսերի ու ձգտումների ամենահարազատ ցուցացումն էր: Ի վերջո, ռուսական հեղափոխությունից դեռ շատ առաջ հայ մարդկանց հոգեբանությունն ու մտածելակերպը ձևավորվում էր հաշտուր Աբովյանի, Ալիշանի, Նալբանդյանի ու Պատկանյանի, Պեշիկթաշլյանի և այլոց ազդեցության տակ: Ամեն գրիչ վերցնող հայ մարդ արդեն մտածում էր ազգի ճակատագրի մասին, և Միքայել Նալբանդյանի խոսքերը՝ «Ազգի վիճակը ծանրացավ սըլտիս», կարող էր կրկնել ամեն մի շատ թե քիչ նշանավոր հայ հեղինակ:

Միլվա Կապուտիկյանի հայրը՝ Բարունակ Կապուտիկյանը, եղել է լրագրող ու վանի ամենահայտնի հասարակական գործիչներից մեկը: Այս փաստը ի՞նչ ազդեցություն է ունեցել բանաստեղծի անհատականության ձևավորման համար, դժվար է ասել. մենք գիտենք, որ տասնամյակներ շարունակ, ինչպես ինքը՝ Միլվա Կապուտիկյանն է խոստովանում, հոր կերպարը մղված է եղել նրա ենթագիտակցության խորքերը. դաշնակցական հայր ունենալը ամեն տեսակետից այն ժամանակներում պարծենալու բան չէր: Բայց առնվազն խորհրդանշական արժեք այս փաստը ունի:

Այսինքն, և՛ ժամանակը, և՛ ազգային գրականության ավանդները, և՛ իր սեփական անհատականությունը Միլվա Կապուտիկյանին մղում էին այն

Ճանապարհը, որով հետո նա դնաց իր ամբողջ կյանքում: Խորհրդային հասարակության գրական սկզբունքները, ինչքան էլ այդ տարօրինակ թվա ալսօր, շատ կողմերով համահնչուն էին հայ գրականության ավանդներին: Կապուտիկյանը այս կարող էր չգիտակցել վաղ պատանեկույցյան տարիներին, երբ գիտակցությունը գրեթե անմնացորդ գրադված էր նոր իդեալներով, և ինչպես ինքն է ասում, «խորապես արհամարհում էր անձնական քնարերգությունը և գրում էր միայն հասարակական թեմաներով»: Բայց պատանեկան ծայրահեղության տակ թաքնված էր մի շատ էական հատկանիշ, որ հետո ծավալվելու-յատնալու էր բանաստեղծի անհատականության որոշիչ դիժը: Հասարակական շահագրգռությունները գառնալու էին նրա ստեղծագործության առանցքը, առանց խանգարելու նրա «մաքուր» քնարերգությանը:

Կապուտիկյանի ներդրանակ հարաբերությունները նոր հասարակության հետ ճաք տվին 50-ականների կեսերից: Ծեղքը գնալով խորացավ ու սկզբունքային դարձավ: Բայց Կապուտիկյանի իբրև բանաստեղծի հասարակական ակտիվությունը չպակասեց, ընդհակառակը՝ անհատական ճակատագիրը ավելի ու ավելի սերտ կապվեց ժողովրդի ճակատագրին, ձուլվեց նրա մեջ: Նրա սերնդակիցներից շատերը ավելի խորացան այսպես կոչված անհատական քնարերգության մեջ և լավ է, որ այդպես եղավ: Ամեն մեկը հետևում էր իր անհատականության թելադրանքին: Այլապես լավ բանաստեղծություն չէր ստեղծվի: Սիլվա Կապուտիկյանն էլ հավատարիմ մնաց իրեն:

2

Այո, Սիլվա Կապուտիկյանը խորհրդային բանաստեղծ է, արդյունքը այն հասարակարգի, որի մեջ և որի հետ ապրել է նա իր կյանքի առյուծի բաժինը: Բայց Սիլվա Կապուտիկյանը ամենից առաջ հայ բանաստեղծ է, և նրա այս երկու բնորոշումների մեջ ոչ թե հակասություն պետք է փնտրել, այլ նրա բանաստեղծության առանձնահատկությունը: Նրա ազգային էությունը հատակ երևում է և այն ժամանակներում, երբ նա ոգևորված երգում էր նոր կյանքը: Երբեք չպետք է մոռանալ, որ «նոսք իմ որդուն» բանաստեղծությունը գրվել է 1944 թվականին, այն ժամանակ, երբ իմ ասած ճեղքը դեռ շատ հեռու էր. երբ բանաստեղծը անկեղծորեն հավատում էր բոլոր այն դադափարներին, որոնք կազմում էին խորհրդային գաղափարախոսությունը: Բայց արյամբ ժառանգածը, ազգային արմատները շատ ուժեղ էին: Մյուս կողմից, իր ժողովրդի ճակատագրի մասին խորհրդածելիս նա դեռ երկար ժամանակ հենվում էր այն զգացմունքի վրա, որը անվանում էին խորհրդային հայրենասիրություն: Այսինքն, նա մնում էր մեծ պետության քաղաքացին, այդ մեծ պետության մեջ տեսնելով իր ժողովրդի գոյության հենարանն ու երաշխավորը: Հնարավոր է, որ այդ զգացմունքը նրա մեջ շատ ավելի սրված էր, քան իր մյուս սերնդակիցների մեջ, որովհետև նա գուցե բոլորից շատ կապված էր ռուսական իրականության հետ, ամենից շատ և ամենից լավ էր թարգմանվում, ու նրան սիրում և ճանաչում էին խորհրդային ամենատարբեր հանրապետություններում: Բայց այդ գիտակցությունը, ինչքան էլ վաթսունականներից սկսած դժգոհությունը խորհրդային հասարակարգից ուժեղանար նրա սերնդի մտավորականության մեջ, խորհրդային հայ մտավորականության հոգեբանության էական դժերից մեկն էր: Այնպես որ, Սիլվա Կապուտիկյանի հարաբերությունները խորհրդային հասարակության հետ երբեք թշնամական կամ ալլախոհական (գիսիդենտական) չեղան, թեև դժգոհությունը գնալով խորացավ:

Ինչպե՞ս գնահատել այսօր Կապուտիկյանի ամենահայտնի, ամենախոր դործերից մեկը՝ «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը, որը գրվել է 1956—60 թվականներին և ժամանակին արժանացել ամենարարձր գնահատականների: Դա մեր ժողովրդի ճակատագրի լավագույն բանաստեղծական իմաստավորումներից մեկն է, առաջիններից մեկը խորհրդային հայ բանաստեղծության մեջ, շարենցյան փուլից հետո, որի մեջ ազգային ճակատագրի

մասին խոսվում է առանց շրջաստվածությունների, առանց այս կամ այն դրվագը մոռացության մատնելու: Առաջին անգամ հայ բանաստեղծը առանց թաքցրելու ասում է իր զգացածը, ապրածը, կապված Յեղասպանության հետ: Եվ առաջ է քաշվում հայ ժողովրդի հետագա ճանապարհի ամենախիմաստուն բանաձևերից մեկը՝ «Դու պիտի վրեժ առնես ապրելով»: Բայց այդ տողը, ինչպես պոեմի ողջ տրամադրությունը, անխզելիորեն կապված է այն աշխարհ-դժգոհության հետ, որի կարևորագույն տարրը մեծ պետության քաղաքացու գիտակցությունն էր, ընդ որում այնպիսի պետության, որը իր քաղաքացիների կողմից երկար ժամանակ ընկալվում էր իբրև արդարության, մեծ իդեալների պետություն: Այս պոեմի ընթերցողը չի կարող շրջանցել մանկության ու պատանեկության տարիներին վերաբերող այսպիսի տողեր՝

Որ էի թեև, ու Ամերկոմից
Մայրս բերում էր տակաճե՛ պլուրի
Բայց հոր փոխարեն գուրգուռում էր ինձ
Ձանել մի երկիր՝ աղփատ ու բարի...

Այսպես, Կապուտիկյանի համար իր մանկությունը սերտորեն կապված է հորհրդային Հայաստանի կառուցման տարիներին, և այդ «աղքատ ու բարի» երկրի պատկերը շատ բնորոշ է Կապուտիկյանի ողջ սերնդի համար: Բայց բանը միայն մանկությունը չէ: Հայ բանաստեղծի հպարտությունն ու վստահությունը, որ նրան ուժ են տալիս հռչակելու խաղաղ վրեժի իր պատգամը, կապված են հորհրդային Հայաստանի իրականության հետ՝

Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համառ, հազարապատիկ,
Ավերումի դեմ՝ քո ստեղծելով,
Ավեր վաճի դեմ՝ քո Երևանով,
Ահառների դեմ՝ խուլ աճապատից
Նորից տուն դարձող քո քաղաքանով,
Դու պիտի ապրես այսպես, օրանով:

Հետագա տողերում հիշատակվող տրակտորը, Բյուրականը, Սարյանը և այլն, և այլն՝ սրանք բոլորը հայ խորհրդային իրականության նշաններն էին: Եվ չի կարելի չնկատել նաև, որ անեծք կարգալու իր անընդունակությունը Կապուտիկյանը բացատրում է ոչ միայն իր ազգային արմատներով, այլև «Ինտերնացիոնալով» և խորհրդային իր դաստիարակությամբ:

Մյուս կողմից, ինչպես արդեն ասացինք, հայկական թեման ի սկզբանե Կապուտիկյանի գլխավոր թեմաներից մեկն է. ինչքան էլ նոր կյանքն ու ինտերնացիոնալիզմը հարազատ են երիտասարդ մարդու հոգուն, այն, ինչ գալիս է արյան հետ, անբեկանելի է: 19-ին գրված «Խոսք իմ որդուն» բանաստեղծության կողքին շենք կարող չհիշել հայրենի հողի ու ժողովրդի հետ անտրոհելի կապի հաղթական երգը՝

Հայոց աշխարհ, հայոց երկիր, հայոց հող,
Լայն աշխարհում քո գրկի մեջ ապրեմ թող...

Այս բանաստեղծությունն էլ գրված է 1945-ին: Եվ առհասարակ, դժվար է ցույց տալ շատ թե քիչ նշանակալից որևէ գործ և առավել ևս ժողովածու, որի մեջ Հայաստանը ներկա չլինի (այնքան, որ ժամանակակիցներից մեկը Կապուտիկյանին մեղադրել է այն բանի համար, որ ինչքան էլ Կապուտիկյանը բարեկամություն երգի, Հայաստանի մասին է ստացվում):

Այլ հարց է, որ մինչ 50-ականների կեսերը, մինչև «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը Հայաստանի թեման միակողմանի է հնչում Կապուտիկյանի գործերում. դա վերջապես խաղաղ հանգրվանի հասած ժողովրդ երկրի երգ է, և միակ հոգսը մնում է Սփյուռքը, որը դեռ անորոշ, ոչ շատ

հասկանալի մի իրողություն է: Սա էլ կարելի էր հասկանալ՝ Կապուտիկյանը իր արյան մեջ կրում էր ոչ-հեռու անցյալի տառապանքների հիշողությունը, և փոքրիկ հանրապետության պաշտպանվածությունը արտաքին ոտնձգություններից չէր կարող համապատասխան արձագանք շառաջացնել հայ բանաստեղծի հոգում:

Սակայն ժողովրդի անամպ երջանկության պատրանքը անխուսափելիորեն պետք է ցրվեր, և ոչ միայն այն պատճառով, որ Ստալինի մահից հետո շատ արգելված ճշմարտություններ բացվեցին: Պատմական զարգացման տրամաբանությունը նոր խնդիրներ էր առաջադրում հալ ժողովրդին, պատերազմից հետո արթնացող ազգային ինքնագիտակցությունը անխուսափելիորեն մտածել էր տալիս Յեղասպանության, Արցախի և այլ հարցերի մասին: Խորհրդային համակարգը շատ անձկուն գտնվեց նաև ազգային խնդրում, և դրա համար էլ հարցերը պետք է ավելի ու ավելի ղորանային մտածող հայերի մեջ:

Վերջին եղանակի դու անվերջ կսկիծ.
Այդ ե՞րբ գարթնեցիր իմ երակներում...

Այս տողերն էլ «Մտորումներից...» են: Այո, հիշողությունը պահված էր ժողովրդի էության խորքերում, և պահը գալուն պես արթնացավ: Եվ այդ պահից սկսվում է ժողովրդի կյանքի, անցած ճանապարհի իմաստավորման նոր փուլը, որտեղ այդ ճանապարհը շատ ավելի բարդ կեանքներով է ներկայանում, և ներկան էլ այլևս այնքան անամպ չի թվում, ինչպես պատանեկության տարիներին: Կապուտիկյանի այդ տարիների ժողովածուներից մեկը կոչվում էր «Դեպի խորքը լեռան»: Շատ բնորոշ վերնագիր: Սկսվում էր խորացումը, անվերջ և դառնագին խորացումը մեր պատմական ճանապարհի ու նրա վերուվարումների մեջ:

Եվ այդ ընթացքում անխուսափելիորեն Արարատը դառնում է գլխավոր խորհրդանիշներից մեկը (ինչպես և իր այլ սերնդակիցների համար), և հարցականները, հակասությունները գնալով շատանում են: Տարիների ընթացքում Արարատի մասին փաստորեն մի ամբողջ շարք է ստեղծվում, որի մեջ այնպիսի հայտնի բանաստեղծություններ, ինչպիսիք են «Ընդդիմախոսությունը», «Խոհ Արարատ լեռան առիթով», «Աղոթք Արարատին»: Հայ մարդու մեջ արթնանում է զուտ հայկական դարավոր թախիծը՝ ծնունդ ազգային ճակատագրի: Խորհրդային ժամանակների ձեռքբերումները այլևս ի վիճակի չեն խլացնել այդ թախիծի ձայնը, հավիտենական անպատասխան հարցումները: Կարելի է թերևս ուրիշ կերպ ասել. ապահովություն ձեռք բերած, երկիրը շատ թե քիչ շենացրած ժողովուրդը (կամ այդ ժողովրդի մի մասը) այլևս չի ուզում թաքցնել իր ողբերգական տարակուսանքը այն պատմական անհեթեթության հանդեպ, որ իր սուրբ լեռը, այդքան մոտ, գրեթե շոշափելի, իրենը չէ, ուրիշի թշնամական սահմանների մեջ է:

Այն ո՞վ է ասում,
Որ Արարատը ձերն է ու ձերը,
Անհրե՞ք պատրանք,
Քարտեզն է ձերը,
Քարտեզի վրա շափած-գծածը,
Իսկ ի՞նքը՝ լեռը...

«Մերը հոգին է». բայց այստեղ հայկական ճակատագրի բուն ողբերգականությունն է. այս լարված-խռոված մենախոսությունը վերջանում է Արա Գեղեցիկի հիշողությամբ: Արան ևս դառնում է ազգային ճակատագրի խորհրդանիշը, որովհետև մեզանից միշտ խլել են մարմինը, և մեզ մնացել է միայն ոգին... Այս ողբերգական զգացողությունը մոռալել է մեր բանաստեղծությունը ի սկզբանե և իր սրբությանն ու լրումին հասել 20-րդ դարում. դա դարձել է մեր ինքնատիպության, մեր ազգային դեմքի դրսևորումներից

մեկը, և դժվար է պատկերացնել որևէ այլ ազդի բանաստեղծի, որ կարիք ունենար գրելու «Աղոթք Արարատին»-ի պես բանաստեղծություն: Բանաստեղծուհին դիմում է Արարատին այնպես, ինչպես նարեկացին դիմում էր Ասածուն՝ «Ո, լյառն Արարատ...»: Այս տրամադրությունն ու այս աղոթքը կարող էր ծնել միայն հայոց պատմությունը...

Միլվա Կապուտիկյանի քնարական հերոսը ղնալով ավելի ու ավելի խորն է զգում իր յուրաքանչյուր ճակատագրի, այդ ճակատագրի տխուր անկրկրնելիությունը, այդ թեման աստիճանաբար դառնում է գլխավորը նրա քնարերգության (և նաև հրապարակախոսության) մեջ: Վահան Տերյանը 1910-ական թթ. դրեց. «Մեղ չի հասկանա օտարերկրացին, Մեղ չի հասկանա սառն օտարուհին...»: Սա ասում էր մի բանաստեղծ, որ իր ժամանակի ամենալուսավորյալ, ամենալայնհայաց, ազգային ամեն սահմանափակություն ատող մարդկանցից էր: Բայց դա հայ բանաստեղծի, առհասարակ հայ մարդու ճակատագիրն էր՝ կյանքի ինչ-որ սլահին գալ այդ դժվարին եղբակացությունը, որը նրան ոչ թե տրամադրում էր ուրիշների դեմ, այլ ընդամենը բացահայտում իրողությունը:

Միլվա Կապուտիկյանի ևս հավատարիմ է մնում համայնասիրական այն զգացումներին: որ նրա մեջ դաստիարակվել էին վաղ մանկությունից, նա այս դեպքում Թումանյանի ժառանգն է, որը երազում էր այն բանաստեղծների մասին, որ «չեն պղծել իրենց շուրթերն անեծքով»: Զարմանալիորեն հենց հայ բանաստեղծներն էին այդքան վախենում անիծելուց: Կապուտիկյանը, հավատարիմ այդ ավանդույթին, ոչ միայն բնաբան է ընտրում, Միամանթոյի հայտնի տողի հետ միասին («Ով մարդկային արդարություն, թող որ թքնեմ քու ճակատին») Թումանյանի արդեն հիշված տողը, այլև իր պոեմում, հիշելով թուրօական գաղանթությունները, դարձյալ մերժում է անեծքը...

Կապուտիկյանը երբեք չկորցրեց Թումանյանից և իր մանկությունից ու պատանեկությունից ժառանգած վերաբերմունքը ուրիշ ժողովուրդների նկատմամբ, որի էությունը բոլոր մարդկանց, բոլոր ազգերի եղբայրությունն էր:

Բայց նրա ստեղծագործության մեջ անխուսափելիորեն պետք է ուժեղանար կասկածանքը իր երկրի քաղաքականության հանդեպ, քաղաքականություն, որը անձուկ սահմաններ էր գծում ազգային գիտակցության համար արգելելով խոսել Ցեղասպանության մասին, Արցախի մասին, հայոց լեզվի պետական կարգավիճակի և այլևայլ հարցերի մասին, որոնք չէին կարող չծնվել մտածող մարդու հոգում: Ընդգրկում էր ազգային արժանապատվությունը, մարդկային արժանապատվությունը. ընդգրկում էր արյունը: Եվ բանաստեղծը, որը հիսունական թվականներին մի ամբողջ ժողովածու էր գրել խորհրդային ժողովուրդների բարեկամության մասին, 80-ականներին տխուր բանաստեղծություններ է գրում ժողովուրդների խեղված հարաբերությունների վերաբերյալ:

Քեզ կոչում են տիրելու,
Ինձ տիրվելու են կոչում,
Այս անաբժան դեռերի
Ցավն է կապում մեզ իրար...

Բանաստեղծությունը նվիրված է իր ռուս բարեկամուհուն: Ընդ որում նրա մեջ մարդկային կապվածությունը իր բարեկամների հանդեպ, ինչ ազգի էլ նրանք պատկանեին, չի պակասում: Խոռովքը ուղղված է այն պետական մեքենայի դեմ, որը բարեկամներին դնում է անբնական վիճակների մեջ: Եվ պատահական չէ, որ Կապուտիկյանը պահպանեց իր ոչ միայն մարդկային, այլև գրական բարեկամությունը Խորհրդային Միության տարբեր ազգերի պատկանող գրողների, հատկապես ռուս գրողների հետ նաև Խորհրդային Միության փլուզումից հետո: Ի վերջո, նրա պոեզիայի հիմքում ընկած էին ոչ թե քաղաքական անցողիկ կարգախոսները, այլ մարդկային մեծ արժեքները, և ժողովուրդների բարեկամությունը, ինչքան էլ մեր դժվարին կյանքը

փորձությունների ենթարկի այդ բարեկամությունը, մնում է բարձրագույն արժեքներից մեկը, և դա Կապուտիկյանը ժառանգել էր Աբովյանից, թումանյանից:

Կապուտիկյանը երբեք, ըստ էության, կասկածի տակ չառավ իր մանկության ու պատանեկության իղեալները (թե ինչքան խորն էին այդ իղեալները նրա հոգում, վկայում է ամենավերջին տարիներին, հակախորհրդային և հակակոմունիստական տրամադրությունների բարձրակետի ժամանակ դրած նրա բանաստեղծությունը՝ Ստեփան Շահումյանին նվիրված): Այս իրողությունը իստեղծածի ամբողջուն է ենթադրում: Հեշտ չէր այդքան խոր հիասթափություններից հետո, այն էլ մեր 90-ականների մթնոլորտում, պահպանել հավատարմությունը հին իղեալներին՝ արդարության, մարդասիրության, ազգերի բարեկամության գաղափարներին: Քչերին այդ հաջողվեց: Բայց Կապուտիկյանի պես մարդկանց պարագայում ուրիշ կերպ չպետք է լիներ: Խորհրդային, մանավանդ առաջին տասնամյակների հնչուն կարգախոսները նրանց ներկայանում էին իրենց իսկապես մարդկային բովանդակությամբ և ոչ թե այն մակերեսային մոլեռանդությամբ, որը այնքան հեշտությամբ տեղի տվեց հետագա տարիներին:

Բայց խորհրդային պետության հատկապես վերջին տասնամյակների իրողությունները, ի վերջո, հենց այն բարձր իղեալների դեմ էին, որոնց անունով գործում էին իշխանությունները: Այս էր, որ Կապուտիկյանի և ուրիշ մտածող մարդկանց մեջ առաջացնում էր ողբերգական, ավելի ու ավելի սրվող մոտիվներ (տե՛ս նաև Պարույր Սևակի «Եղիցի լույս» գիրքը): Այդ պայմաններում էր, որ իսկական բանաստեղծությունը (և առհասարակ իսկական գրականությունը) յուրատեսակ հոգևոր ընդդիմություն էր դառնում (չժխտելով այլախոհության ազդկոտ ցուլցերի հետ):

Սեփական ժողովրդի ճակատագրի հարցականները ծառանում էին բանաստեղծի առջև ահա այս բարդ, խճճված մթնոլորտում: Եվ պարզ է, որ այս պայմաններում, եթե անգամ չլիներ էլ գրաքննությունը (որը շատ պրոտորեց հատկապես այս սերնդի գրողների արևումը), նրանց հալոսնասիրական քնարերգությունը չէր կարող ունենալ 19-րդ դարի հեղինակների բմբուսությունը. չկային միանշանակ վճիռներ: Դա պետք է լիներ տագնապի, կասկածների և հավատի բանաստեղծություն, ինչպիսին և եղավ:

3

Միլվա Կապուտիկյանի գրական ճակատագրի կեռամաններից մեկը նրա կտրուկ անցումն էր արձակին կամ գեղարվեստական հրապարակախոսություններ. հետագան ցույց տվեց, որ այս անցումը վերջնական չէր. բայց այն տարիներին թվաց, թե Կապուտիկյանը ավարտել է իր անելիքները բանաստեղծություն մարզում: Ուրիշ կերպ եղավ: Մանավանդ «Ձմեռ է գալիս» ժողովածուն ցույց տվեց, որ Միլվա Կապուտիկյանը դեռ իր բանաստեղծական ասելիքը չի սպառել: Բայց, անկախ դրանից, նրա արձակը շատ նշանակալից երևույթ եղավ:

Նախ, ձևը: Ուղեգրության ժանրը, անկասկած, անձանոթ չէր հալ արձակին: Դարասկզբին մեծ անուն էին հանել Ավետիս Ահարոնյանի եվրոպական ուղեգրությունները, որոնցից հատկապես «Շվեյցարական գյուղը» որոշակի հրապարակախոսական-հրատապ լիցք ունեռ. պատմելով շվեյցարական գյուղի մասին, Ահարոնյանը չէր էլ թաքցնում, որ այդ անում է հայ դյուղի վերափոխման ուղիները գծելու համար: Կարելի է հիշել և ուրիշ հին ու նոր օրինակներ: Բայց Կապուտիկյանի արածը տարբերվում էր բոլորից: Հետո պարզ դարձավ, որ Կապուտիկյանը մտահղացել էր տալ հայ Սփյուռքի համայնապատկերը, դրա միջոցով առաջ քաշելով նաև առհասարակ հայ ժողովրդի դուլության և կենսափիլիսոփայության կարևորագույն խնդիրները: Եվ այս բոլորի համար Կապուտիկյանը քնտրել էր մի ձև, որը իսկապես շատ հարմար ու ընդգրկուն եղավ. կենդանի պատկերներ, մանրանկարներ, սրտնք

ընդմիջարկվում էին խորհրդածուխություններով: Առաջին գրքին՝ «Քարավանները դեռ քայլում են», իսկապես Երջանիկ ճակատագիր էր վիճակված. այն դարձավ ամենաընթերցվող գրքերից մեկը Հայաստանում: և, թարգմանվելով ուսաներեն, անմիջապես արժանապավ ուսու դրական հասարակայնության ուշադրությունը: Կապուտիկյանը ըստ էության մի անհայտ աշխարհ էր հայտնադործում մեզ համար՝ հայկական Սփյուռքը: Մենք գիտեինք դրա գոյության մասին, բայց մենք չգիտեինք՝ իրականում ինչ է այդ սփյուռքը: Կապուտիկյանը տվեց ահա այդ իրական, բազմաշափ պատկերը, տվեց կենդանի դեմքերի, հանդիպումների, զրվագների միջոցով: Շատ կարևոր էր այս գիրքը այն ժամանակների մեր հոգևոր կյանքի համար: Ասում էինք՝ մի ազգ, մի մշակույթ: Բայց մի քանի տասնամյակի ընթացքում մեր միջև իսկապես «երկաթե վարագույր» էր գոյացել, և Կապուտիկյանի գիրքը բարձրացնում էր այդ վարագույրը, ու մենք տեսնում էինք մեզանից տարբեր, մանավանդ բաղաճական այլ պատկերացումներով ապրող, բայց իսկապես մեր արյունակիցներին, մեր մի մասին, որը դեպքերի դժբախտ բերումով ապրում էր օտար երկրներում: Այսպես էր Սփյուռքը մոտենում մեզ:

Այդ գրքում անխուսափելիորեն զգացվում են ժամանակի մտայնություններ, պարտադրանքները և, ինչպես պարզվում է բանաստեղծի վերջին հրապարակախոսական գրքից՝ «էջեր փակ գզրոցներից», գրաքննության մրկարտներին հետքերը. շատ էջեր կտրվել-հանվել են հատորից: Եվ դրա համար մանավանդ այսօր որոշ գնահատականներ ու մոտեցումներ վիճելի կամ մերժելի, միակողմանի են թվում, մանավանդ ազգային քաղաքական ուժերի գնահատումների խնդրում: Բայց սրանք իսկապես մասնակի թերություններ էին այն մեծ ծառայության համատեքստում, որ անում էր Կապուտիկյանը մեր ազգային զիտակցությանը, մեր հոգևոր աշխարհին այս գրքով:

Երկրորդ, ավելի ծավալուն, բայց նույնքան կենդանի պատկերներով հագեցած գիրքը կոչվում էր «Խճանկարներ հոգու և քարտեզի գույներից», և պատմում էր ամերիկյան Սփյուռքի մասին («Քարավանները...») նվիրված էր այն ժամանակների ամենահայտնի և մեր ազգային խնդիրները ավելի սրությանը վերապրող գաղթօջախին՝ մերձավորարևելյան սփյուռքին:

Հետագա գրքերում ու ակնարկներում Կապուտիկյանը տվեց նաև եվրոպական գաղթավայրերի նկարագիրը, ամբողջացնելով հայկական սփյուռքի պատկերը:

Բոլոր այս գրքերում Կապուտիկյանը ներկայանում է ոչ միայն իբրև սուր մտքի տեր և լայնախոհ հրապարակախոս, այլև պատմողական խոսքի վարպետ, որը կարողանում է կարճ բնութագրերի մեջ տալ մարդկային տասնյակ տիպերի գունեղ պատկերներ, ընտրել բաղում հանդիպումներից ամենաբնութագրականները, ամենախոսունները և այդ բոլորին գումարել հումորի անուրանալի շնորհը, որն այնքան աշխուժացնում է խոսքը:

Այս հրապարակախոսական գրքերի երևան գալը, անշուշտ, անսպասելի չէր: Կապուտիկյանի պոեզիային ծանոթ ամեն ոք զգում է այն ներքին հոգեհարազատությունը, որ կա նրա պոեզիայի և հրապարակախոսության միջև. շատ հաճախ մեկը լրացնում է մյուսին: Այն, ինչ հնարավոր չէր ասել քնարական բանաստեղծության անձուկ տարածության մեջ, ասվում էր հրապարակախոսական գրքերի արձակ տարածություններում: Եվ այնուամենայնիվ, Կապուտիկյանի հակումը դեպի հրապարակախոսությունը շատ ավելի հիմնավոր եղավ, քան կարելի էր ենթադրել առաջին գրքից: Թվում էր, թե Սփյուռքին նվիրված գրքերը սպառում են նրա հրապարակախոսության գրել-խավոր երակը: Բայց ոչ. ամենավերջին տարիներին Կապուտիկյանը տպագրեց մի ծավալուն հատոր ևս՝ արդեն հիշված «էջեր փակ գզրոցներից» գիրքը: Սրա ժանրերը ճշգրտելը դժվարին խնդիր է: Դա ինքնակենսագրություն չէ. այստեղ հրապարակախոսական ուղղվածությունը թերևս ավելի է բնագծված, բան նախորդ գրքերում: Բայց սա բանաստեղծ և հասարակական գործիչ Սիլվա Կապուտիկյանի էության հարազատ արտահայտությունն է, և արդեն դրանով շատ հետաքրքրական: Ծանաչել մի մարդու, որը տասնամ-

յակները շարունակ եղել է եթե ոչ իրադարձությունների կիզակետում, ապա գոնե դրանց ամենակտիվ մասնակիցը, արդեն նշանակում է ճանաչել նրա ժամանակը, գոնե դրա մի քանի ամենակարևոր կողմերը: Մանավանդ որ Կապուտիկյանը իր վերաբերմամբ էլ շատ անկեղծ է: Պատմում է և՛ այն մասին, թե ինչպես է լաց եղել Ստալինի մահվան օրը, և՛ այն մասին, թե ինչպես տարիներ շարունակ աշխատել է չմտածել հոր մասին և այս բոլորը իր ապրած ժամանակի, իր հասարակության նշաններն են: Ահա այս իմաստով Կապուտիկյանի վերջին գիրքը շատ օգտակար է լինելու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն հասկանալ խորհրդային խորապես հակասական, խորապես անմիանշանակ իրականությունը:

Բայց, մյուս կողմից, Կապուտիկյանը միշտ հավատարիմ է իրեն և այստեղ էլ շարունակում է իր կրքոտ վեճը, որն սկիզբ առավ Ղարաբաղյան շարժման և անկախության տարիներին՝ վեճը մեր ներկրի ու ժողովրդի հետագա ճանապարհի մեր հոգևոր կյանքի, մեր պետականության մասին: Հիշեցնեմ մի փաստ. արցախյան շարժման սկզբում հայ մտավորականության մի մեծ խումբ, որոնք թվում և Միլվա Կապուտիկյանը, հանդես եկավ բաց նամակով, կոչ անելով համախմբել ուժերը ազգային նպատակներին հասնելու համար և խուսափել արկածախնդրական քայլերից: Այդ նամակին հետևեց Լ. Տեր-Պետրոսյանի հողվածը՝ «Պատվերը կատարված է, սպասեք շքանշաններին» վերնագրով: Սա թերևս սկիզբն էր Տեր-Պետրոսյանի ու իր զինակիցների և հայ մտավորականության մեծ մասի հակամարտության. դա Տեր-Պետրոսյանը շնորհակալ նախագահ դառնալուց հետո և ամեն կերպ ընդգծեց իր անբարյացակամությունը հայ մտավորականության հանդեպ, որը թերևս անուղղելի վնասներ հասցրեց մեր հոգևոր կյանքին, մեր զարգացմանն առհասարակ: Ընթերցողը այս գրքի էջերում գտնում է և՛ մտավորականների նամակը, և՛ Տեր-Պետրոսյանի հողվածը ամբողջությամբ, և՛ իր՝ Կապուտիկյանի մեկնաբանությունները՝ անզիջում, կտրուկ և, իմ համոզմամբ, ճշմարիտ: Ընթերցողը հեշտությամբ կհամոզվի, որ Կապուտիկյանը իր գրքում մատնացուց է անում նոր իշխանությունների իսկապես վտանգավոր արատները, որոնց հետևանքը երկրի այսօրվա անմխիթարական վիճակն է:

4

Եվ այսպես, հասարակական մոտիվները Կապուտիկյանի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ են գրավել ի սկզբանե: Այդ պատճառով, հատկապես վերջին տարիներին, նրա պոեզիայի այն մասը, որը երբեմն անվանում են անձնական կամ անհատական քնարերգություն, մի տեսակ ստվերի տակ է մնում: Սա արդարացի չէ, իհարկե, Կապուտիկյանի քնարական հերոսը մարդն է, որն ապրում է ոչ միայն հասարակական խնդիրներով, այլև իհարույն անձնական կյանքով: Նրա ստեղծագործության մեջ եղավ մի շրջան, երևի մի քսան տարի, մինչև վաթսուներեկների սկիզբը, երբ մարդու անհատական կյանքի խնդիրները շատ մեծ տեղ էին գրավում նրա երգերի մեջ, և հենց այդ քնարերգությունն էր, սիրո երգերն էին, որ նրան յայն ճանաչում ապահովեցին Հայաստանի սահմաններից դուրս: Կապուտիկյանը մատնահորեն առաջիններից մեկն է նոր շրջանի հալ կին բանաստեղծների շարքում, որոնք գրականություն բերին կնոջ ներքին աշխարհը, մայրական զգացումները, սերը վերապրելու կանացիական կերպը:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Այն տարիներին, երբ Կապուտիկյանը գրականություն էր մտնում, «անձնական քնարերգություն» կոչվածը հարգի չէր, գա քաղքենիություն էր համարվում, այն էլ զանազան պիտակներով՝ «ամանբերժուական» և այլն: Հետո էլ այդպիսի պիտակներ Կապուտիկյանի ստեղծագործությանը կպցրել են: Բայց բանաստեղծուհու ըմբոստ խառնվածքը երևան է եկել նաև այստեղ: 1940 թ. գրել է մի ուժեղ բանաստեղծություն «Կլեոպատրա» վերնագրով, որի մեջ եգիպտական հուշակավոր թագուհու անձը դարձել է կանացիության խորհրդ-

զանիշ, իսկ ամբողջ բանաստեղծությունը հնչում է իբրև հիմն կնոջը: Այսպիսի փաստերը չի կարելի աչքաթող անել այն ծանր տարիների գրականության մասին խոսելիս: Գրական նոր սերունդը ասպարեղ էր մտնում ոչ միայն կուսակցությանն ու սոցիալիզմին նվիրված երգերով... Իսկ Կապուտիկյանը բերում էր կնոջ հոգու խոռվքը, գրամատիկական ապրումների ամենատարբեր հրանգները: Կնոջ անվերջ սպասումների ու շկայացած սիրո տառապանքն է հնչում այդ երգերում, և սա դժվար թի «ճիշտ ընկալվեր» այն տարիներին:

Մյուս կողմից, ազգային արմատները, ինձ թվում է, այստեղ ևս շատ կարևոր են: Հատկապես կինը սիրո իր ապրումների մեջ շատ ավելի ավանդական-ազգային է: Կապուտիկյանը մի բանաստեղծություն ունի, որը շատ բան է բացատրում կնոջական հոգու մեջ.

Փամտուն զնացող էն խառն-խաբուն տեգերկիներ
Օրոր-շորոր կա իմ քայլածքում,
Իմ հայացքի մեջ՝
Յագվայի տակից խելահասն անող ճրանց աչքերի
Խայծն ու խոլորը:
Բայց իմ երակում, իմ հոգու խորը՝
Իր պանդուխտ էրկան դարձին մեացած,
Սուրբ նվիրումով բոներին կոացած,
Ձիգ տարիներով սիրուց անվաղ հայաց Թարսների
Ձուպ արշուներ կա,
Նրանց մեծ հոգու լույսն ու անդորր...

Կապուտիկյանի քնարական հերոսուհին ահա այն կինն է, որ երազում է միակ ու մեծ սիրո, կնոջական անամպ երջանկության, ընտանեկան անդորրի մասին, ընտանեկան օջախի մասին, և անգամ սիրո հուսահատ կանչերում՝

Թեկուզ բերես դու ինձ
Մի նոր դավի կսկիծ,
Թեկուզ ուրիշ գրկից,
Միայն արի, արի...

Ըսվում է կանացի այն մեծ զգացմունքը, որը փնտրում է ոչ թե վաղ-անցիկ վաշելքներ, այլ իր միակ ու անփոխարինելի ասպետին: Երևի պատահական չէ, որ Արա Գեղեցիկի և Նվարդի պատմությունը այնքան մեծ տեղ է գրավում նրա ստեղծագործության մեջ՝ և՛ հայրենիքին նվիրված, և՛ անձնական կյանքին վերաբերող բանաստեղծություններում: Նրա ընթերցողները երևի չպետք է անցնեն «Նվարդի հառաչը» բանաստեղծության կողքով, որի տողերում շատ բան կարելի է զգալ, բայց որն է վերջո հայ կնոջ կարոտի կանչն է՝ ուղղված այն միակ ու անփոխարինելի տղամարդուն, որը ընտանիքի սյունն է ու կնոջ հենարանը:

Նկ, մայրաշունչ լալարդն եմ քո, ու նույնն եմ ես
Խալղ աստծուց մինչև մեհյանն ու եկեղեցի.
Քսանդարյա իմ հավատով մնում եմ քեզ.
Նկ, իմ Արա, իմ Գեղեցիկ...

Այս է գլխավորը: Մնացած բոլորը այս մեծ երազի բեկումներն են տարբեր իրավիճակներում ու տրամադրություններում:

Ես արդեն ասացի, որ երբ լույս տեսան Կապուտիկյանի ուղեգրությունները, թվում էր, թե պոեզիան մոռացվում է բանաստեղծի կողմից. մանա-

վանդ, մինչև այդ արդեն շատ բան էր արված այս մարզում, ստեղծվել էին մեծ տարածում ձեռք բերած գործեր: Բայց վերջին երկու տասնամյակները ցույց տվին, որ բանաստեղծությունը իսկապես Կապուտիկյանի անհատականության գլխավոր դրսևորումն է: Ութսունական թվականների սկզբին նստապահեց մի փոքրիկ ժողովածու՝ «Ձմեռ է գալիս» բնորոշ վերնագրով, որը ոչ միայն իր բանաստեղծության, այլև այն տարիների ողջ հալ գրականության անկասկածելի ձեռքբերումներից մեկը կոչվի թվում է, թե այդ տարիքում առաջընթացի, նոր քայլի մասին խոսելն անտրամաբանական է. բայց Կապուտիկյանի այս գրքույկը՝ իմ տպավորություններ, առանձնանում է նրա ստեղծագործության մեջ, մնալով դրա բնական շարունակությունը: Թերևս մի մի անդ անհատականի ու հասարակականի հակադրությունը այնքան անխմաստ չի դառնում, որքան այս փոքրիկ ժողովածուում: Հայաստանն ու հայ ժողովուրդը փոխարինում են երիտասարդ տարիների սիրած մարզում: քննական հերոսը զրուցում է հայրենիքի հետ այնքան մտերմաբար, անկեղծության մի այնպիսի աստիճանով, որ հնարավոր է միայն միակ սիրելի մարդու հետ: Թերևս, ավելի ձիշտ է ասել, հերոսը զրուցում է հայրենիքի հետ իրեն որդին ծերացած մոր հետ, զրուցում է անմարելի պարտքի, սիրո գիտակցումով: Այս երգերում զուտ անձնական-քնարական այնպիսի մի երանդ կա, որ ամենաանձնական բանաստեղծության մեջ դժվար է գտնել:

- Միծաղեցի, թե լացի՝
Փրկում շեղավ քեզանից,
- Անիծեցի, օրհնեցի՝
Փրկում շեղավ քեզանից,
- Ամբողջ մի կյանք ամեն տեղ
Խոսք քացի ամենիս,
- Խոսք չասած զեացի՝
Փրկում շեղավ քեզանից:

Այլ կոնտեքստում այս բանաստեղծությունը կարելի էր նաև սիրային բանաստեղծություն համարել, այնքան անհատական, այնքան հոգու խորքերից եկող մի հնչերանգ կա այստեղ: Բայց սիրո այս զարմանալի խոստովանությունը, որի մեջ սիրո ոչ մի տող ու բառ չկա, ասված է երկրի, հայրենիքի հասցեին:

Հրապարակային-կրթող, հոկտոբրական խոսքը տեղը զիջում է անձնական խոստովանությանը, և այս հանգամանքը հայրենասիրությունը ներկայացնում է իբրև զուտ անհատական զգացում, այնպիսին, ինչպիսին մարդ ունենում է մոր, սիրածի, երեխայի նկատմամբ: Բայց այս բոլորին գումարած հայրենիքի պատմական ճակատագրի դառը բեռը, որը ներքին ավելի խոր զգացմունքայնություն է հաղորդում խոսքին:

Այսպես են գրված «Նարեկացու լույսի պես...», «Ափսոս, որ իմ տվածից...», «Լուր-դա-լուր», «Քեղև, լառ» և ուրիշ շատ երգեր:

Այս բանաստեղծություններից տրամադրությամբ ու հնչերանգով քիչ են տարբերվում այն գործերը, որոնք, ավանդաբար՝ կարելի է անհատական երգեր համարել՝ խորհրդածությունները իր անհատական ճակատագրի մասին:

- Ճախ է ավել ապակին—
Դրսից դեռ չի երևում
- Ճախ է ավել իմ հոգին—
Դրսից դեռ չի երևում.
- Կեռ զինի կա բաժակում:
Դեռ զնգում եմ. բայց հանկարծ
- Կիջրվեմ ձեր ձեռքին—
Դրսից զեռ չի երևում...

Բայց սա նույն մարդն է, նույն հերոսը, որը հասել է փորձի և իմաստնության բարձրակետին, պահպանելով, որ շատ դժվար է, զգացմունքների և ապրումների անմիջականությունը: Հրապարակային հնչերանգը ոչ թե անհետացել է, այլ այնքան ներդաշնակորեն ձուլվել քնարական զգացումին, որ այլևս նկատելի չէ. բայց էությունը չի փոխվել՝ կամերայնությունը (որը ընդհանուր առմամբ քնարերգության անխուսափելի և բնական հատկանիշներից մեկն է) խորթ է Կապուտիկյանի բանաստեղծությանը, նա հասարակական մարդ է, և ամենախորին թախծի մեջ էլ նա դիմում է ուրիշներին, մարդկանց: Բանաստեղծական խոսքը շատ է ազնվացել իսկ և իսկ՝ «չամշած, քաղցրացած», ինչպես ինքը ասում է դիրքը բացող բանաստեղծության մեջ:

Այս գրքուկի մեծագույն արժանիքներից մեկը սակավաբառությունն է, լակոնիզմը, որը բանաստեղծի երգերում դեռ երբեք այսքան տեղին ու արժեքավոր չի եղել. բանաստեղծությունների մեծ մասը՝ ութ տող, մի քառյակ, մի քիչ ավելի, բայց լեցուն, ազդեցիկ, խորը...

Ավելի ուշ, 1992 տխուր թվականին Սիլվա Կապուտիկյանը գրում է մի բանաստեղծություն «Հին կարոտ» վերնագրով, որը հայ կնոջ կյանքի ճանապարհի բանաստեղծական խորհրդանիշ է: Երազի մեջ երեք կանայք են. որոնց վիճակված է անցնել հայ մարդուն 20-րդ դարում վիճակված տառապալից ճանապարհ՝ ծնվել վանում, գաղթել-հեռանալ հայրենի քաղաքից և տունուտեղ դնել Երևանում: Երեք կանայք, որոնք իրական կյանքում երեք սերունդներ են՝ տատը, մայրը և թոռնուհին (որի անունից ամեն ինչ ասվում է): Բայց երազի մեջ երեք կանայք հասակակիցներ են, կողք կողքի են, միասին են տանում ճակատագրի հարվածներն ու պարգևները: Պատկերը ստացվել է խոստուն, խորը, տպավորիչ. հայ կինը, հայ մարդն առհասարակ իր մեջ կրում է բոլոր նախորդ սերունդների տառապանքի և կյանքի փորձը: Սա առավել ճշմարիտ է բանաստեղծի համար, որն իր մեջ ունի վանեցի նախնիների արյունն ու հիշողությունը, որը Երևանի իր ապահով գոյություն մեջ վերապրել է իր մոր և տատի ողջ կյանքը և իր հասունության տարիքում դարձել նրանց քույրն ու հասակակիցը: Զվարթ նոտաներ այս բանաստեղծության մեջ չկան: Ավելի շատ տխրություն կա, բայց սերունդների միասնության այդ զգացողությունը շատ է վարակիչ, շատ է բուլանդակալից.

Այսպես գալիս ու անցնում են օրեր ու տարիներ,
 Հանգչում են մունջ երեք շիրիմ՝ նորի բարձունքն ի վեր,
 Հանգչում են երեք այրված հոգի՝ խոր խոռված կյանքից,
 Մահից հետո արդեն դարձած իրոք հասակակից,
 Նույն խոլ բախտով աշխարհ եկած, նույն երազով անեզր,
 Նույն կարոտով իջած շիրիմ՝ տառա, մայրս ու ես...

Կապուտիկյանը իր ամբողջ կյանքի ընթացքում չզավաճանեց իր երիտասարդության իդեալներին. բայց դրանք խորացան, ճշտվեցին, ստուգվեցին կյանքի դառն փորձով, ավելացնելով տխրության, երբեմն շատ խորը տխրության այն բաժինը, որն հատուկ է վերջին տասնամյակների բանաստեղծություններին: Անհատական ու հասարակական մոտիվները գնալով ավելի ու ավելի ներդաշնակվեցին նրա քնարերգության մեջ, անհատի ճակատագիրը ավելի խորն ու բնականորեն ներհյուսվեց ժողովրդի ճակատագրին, տալով քնարերգության այն որակը, որը հայ նորագույն բանաստեղծության մեջ կապվում է Սիլվա Կապուտիկյանի անվան հետ...